

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության
և
Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության
միջև
օդային հաղորդակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և
Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը,
որոնք այսուհետև կանվանվեն Պայմանավորվող կողմեր,

հանդիսանալով 1944 թվականի դեկտեմբերի 7-ին
Չիկագոյում ստորագրված «Միջազգային քաղաքացիական
ավիացիայի» մասին կոնվենցիայի մասնակիցներ,

ցանկանալով կնքել համաձայնագիր իրենց համապա-
տասխան տարածքների միջև և դրանց սահմաններից դուրս
օդային հաղորդակցություններ հաստատելու վերաբերյալ,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված I

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոնշյալ
տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

ա) «ավիացիոն իշխանություններ» նշանակում է՝

Հայաստանի Հանրապետության դեպքում՝ քաղաքացիա-
կան ավիացիայի գլխավոր վարչություն,

Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեպքում՝
տրանսպորտի և հաղորդակցության նախարար կամ Եգիպտոսի
քաղաքացիական ավիացիայի ծառայության նախագահ, կամ
երկու դեպքում էլ՝

ցանկացած անձ կամ մարմին, որն իրավասու է կատարելու
նշված իշխանությունների կողմից ներկայումս իրականացվող
որևէ գործառույթ.

բ) «պետության տարածքի» տակ սույն Համաձայնագրի նպատակների համար հասկացվում են տվյալ պետության ինքնիշխանության, հովանավորության և մանդատի տակ գտնվող ցամաքային տարածքները և նրանց հարող տարածքային ջրերը.

գ) «կոնվենցիա» նշանակում է՝ 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիան և ներառում է կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած հավելված և վերջինիս ցանկացած ուղղում՝ այնքանով, որքանով այդպիսի հավելվածը կամ դրա ուղղումը կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ, ինչպես նաև կոնվենցիայի 94-րդ հոդվածի համաձայն ընդունված՝ կոնվենցիայի ցանկացած ուղղում, որը վավերացվել է երկու Պայմանավորվող կողմերի կողմից.

դ) «օդային հաղորդակցություն», «միջազգային օդային հաղորդակցություն», «ավիաընկերություն» և «կանգառ ոչ առևտրային նպատակներով» տերմիններն ունեն կոնվենցիայի 96-րդ հոդվածով համապատասխանաբար սահմանված նշանակությունները.

ե) «համաձայնեցված հաղորդակցություններ» նշանակում է՝ սույն Համաձայնագրի հավելվածում նախատեսված երթուղիներով և տարողունակության համաձայնեցված նորմերին համապատասխան կատարվող՝ ուղևորների, բեռների և փոստի նախատեսված ծառայություններ.

զ) «բեռների փոխադրման ծառայություններ» նշանակում է՝ միջազգային օդային ծառայություն, որն իրականացվում է այնպիսի օդանավով, որով առանձին-առանձին կամ համակցված փոխադրվում են բեռներ և փոստ (դրանք ուղեկցողների հետ միասին), սակայն չեն փոխադրվում ուղևորներ.

է) «նշանակված ավիաընկերություն» նշանակում է՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան նշանակված և լիազորված ավիաընկերություն.

ը) «սահմանված երթուղի» նշանակում է՝ սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված երթուղի.

թ) «սակագներ» նշանակում է՝ այն գները, որոնք սահմանվում են նշանակված ավիաընկերությունների կողմից ուղևորների և բեռների փոխադրման համար, ինչպես նաև այն պայմանները, որոնց օգնությամբ կիրառվում են այդ գները, բացառությամբ փոստի փոխադրման համար սահմանված գների և պայմանների:

2. Սույն Համաձայնագրի հավելվածը համարվում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին տալիս է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքները՝ սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված երթուղիներում միջազգային օդային ծառայություններ կազմակերպելու համար (այսուհետև՝ համապատասխանաբար, «սահմանված երթուղիներ» և «համաձայնեցված ծառայություններ»):

Հոդված 3

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունը (ավիաընկերությունները) սահմանված երթուղում համաձայնեցված ծառայություններ իրականացնելիս օգտվում է (են) հետևյալ իրավունքներից՝

ա) առանց վայրէջքի բռնիքներ կատարել մյուս Պայմանավորվող կողմի տարածքով.

բ) ոչ առևտրային նպատակով վայրէջք կատարել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ սույն Համաձայնագրի հավելվածում նշված կետերում.

գ) վայրէջք կատարել մյուս Պայմանավորվող կողմի այն կետերում, որոնք տվյալ երթուղու համար սահմանված են սույն Համաձայնագրի հավելվածում՝ միջազգային փոխադրման համար ուղևորներ, բեռներ և փոստ վերցնելու կամ իջեցնելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի ոչ մի դրույթ չի դիտարկվի այնպես, թե Պայմանավորվող կողմերից մեկի նշանակված ավիաընկերությանը (ավիաընկերություններին) իրավունք է տրվում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վերցնել ուղևորներ, բեռներ և փոստ՝ վճարման կամ վարձատրման պայմանով այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող այլ կետ փոխադրելու նպատակով:

3. Սահմանված երթուղիների վրա գտնվող կետերում նշանակված ավիաընկերություններից յուրաքանչյուրը իրավունք ունի օգտվելու բոլոր ավիաուղիներից, օդանավակայաններից և Պայմանավորվող կողմերի՝ անխտրականության և փոխադարձության հիման վրա տրամադրվող այլ միջոցներից:

4. Օդանավերի շահագործման, ուղևորների, բեռների և փոստի փոխադրման հետ կապված համաձայնեցված հաղորդակցությունների բոլոր տեխնիկական և առևտրային հարցերը, ինչպես նաև առևտրային համագործակցության հետ կապված հարցերը, մասնավորապես՝ չվացուցակը, օդանավերի վերգետնյա տեխնիկական սպասարկումը և ֆինանսական հաշվարկների վճարման կարգը, Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերությունների միջև սահմանվում են փոխադարձ համաձայնությամբ, և դրանք ներկայացվում են համապատասխան ավիացիոն իշխանությունների հաստատմանը:

ՀՈՂՎԱԾ 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի նշանակել մեկ կամ մի քանի ավիաընկերություն և այդ նշանակման մասին գրավոր հայտնել մյուս Պայմանավորվող կողմին՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված ծառայություններ իրականացնելու համար:

2. Մյուս Պայմանավորվող կողմը նշանակման մասին ծանուցումն ստանալուն պես անհապաղ, հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները, նշանակված ավիաընկերությանը (ավիաընկերություններին) տալիս է գործունեության իրականացման համապատասխան թույլտվություն:

3. Մինչև գործունեության իրականացման թույլտվություն տալը Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունից (ավիաընկերություններից) պահանջել՝ իրենց ներկայացնելու այն ապացույցները, որոնցով հաստատվում է, որ նա ունի համապատասխան որակավորում՝ կատարելու համար այն պայմանները, որոնք սովորաբար կիրառվում են այդ իշխանությունների կողմից միջազգային օդային ծառայություններ իրականացնելու նկատմամբ և սահմանված են միջազգային օրենքներով ու կանոններով:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն հոդվածի 2-րդ կետին համաձայն, իրավունք ունի մերժելու թռիչքների թույլտվություն տալը կամ պահանջելու այնպիսի պայմանների կատարում, որոնք նա անհրաժեշտ է համարում նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված իրավունքներն իրականացնելիս՝ ամեն դեպքում, երբ հիշյալ Պայմանավորվող կողմը ապացույցներ չունի այն բանի, որ այդ ավիաընկերության նկատմամբ նյութական սեփականության իրավունքների իրական վերահսկողությունը պատկանում է այդ ավիաընկերությանը նշանակված Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին:

5. Նշանակվելու և թույլտվություն ստանալու դեպքում ավիաընկերությունը կարող է սկսել համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնել, ընդ որում այդ հաղորդակցությունների նկատմամբ կգործեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով սահմանված կարգով հաստատված սակագները:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համապատասխան ավիացիոն իշխանություններին գրավոր ծանուցելու միջոցով իրավունք ունի իր կողմից նշանակված ավիաընկերությունը փոխարինելու այլ ավիաընկերությունով: Նոր նշանակված ավիաընկերությունը ունի նույն իրավունքները և կրում է նույն պարտականությունները, ինչ այն ավիաընկերությունը, որին նա փոխարինել է:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի հետ վերցնելու գործունեության բույլտվությունը, կասեցնելու նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված իրավունքների իրականացումը կամ սահմանելու այնպիսի պայմաններ, որոնք նա անհրաժեշտ է համարում այդ իրավունքների իրականացման համար:

ա) ցանկացած դեպքում, երբ նա բավարարված չէ այդ ավիաընկերության (ավիաընկերությունների) նկատմամբ սեփականության և վերահսկողության իրականացման իրավունքի փոխանցմամբ այդ ավիաընկերությանը (ավիաընկերություններին) նշանակված Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին, կամ՝

բ) այն դեպքում, երբ ավիաընկերությունը (ավիաընկերությունները) չի կատարում այդ իրավունքները տված Պայմանավորվող կողմի գործող օրենքները և կանոնները, կամ՝

գ) այն դեպքում, երբ ավիաընկերությունը (ավիաընկերությունները) չի գործում սույն Համաձայնագրով նախատեսված կարգով սահմանված պայմաններին համապատասխան:

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված պայմանների անհապաղ վերացումը, կասեցումը կամ սահմանումը անհրաժեշտ են՝ կանխելու համար օրենքների և կանոնների հետագա խախտումները, այդպիսի իրավունքները կարող են իրականացվել միայն մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հետ խորհրդակցելուց հետո:

Այդ դեպքում խորհրդակցությունները կսկսվեն դիմելու օրվանից ոչ ուշ, քան վաթսուն (60) օր հետո:

Հոդված 6

1. Պայմանավորվող կողմերից մեկի այն օրենքները և կանոնները, որոնք վերաբերում են միջազգային հաղորդակցություններ իրականացնող օդանավի՝ իր տարածքից մեկնելուն և իր տարածք ժամանելուն, ինչպես նաև իր տարածքում այդպիսի օդանավի շահագործմանը և օդագնացությանը, տարածվում են մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) վրա:

2. Պայմանավորվող կողմերից մեկի այն օրենքները և կանոնները, որոնք վերաբերում են ուղևորների, անձնակազմի, բեռների և օդանավի՝ իր տարածք մուտք գործելուն, այդ տարածքում գտնվելուն և այդ տարածքից մեկնելուն (ներառյալ մուտքի փաստաթղթերի ձևակերպման, ավիացիոն անվտանգության, ներգաղթի, անձնագրերի, մաքսային ծառայությունների, կարանտինի վերաբերյալ օրենսդրությունը և կանոնները, ինչպես նաև, փոստի դեպքում, փոստային ծառայության վերաբերյալ օրենքները և կանոնները) պետք է տարածվեն առաջին Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող՝ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) ուղևորների, անձնակազմի, բեռների և օդանավերի վրա: Այդպիսի օրենքները և կանոնները յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հավասարապես կիրառի բոլոր երկրների ուղևորների, անձնակազմի, բեռների և օդանավերի նկատմամբ՝ առանց ավիաընկերության երկրի տարբերակման:

Հոդված 7

1. Պայմանավորվող կողմերից մեկի համապատասխան լիազորված մարմինների կողմից մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության օդանավակայանից, ավիաուղիներից և քաղաքացիական ավիացիայի սպասարկումներից և ծառայություններից օգտվելու համար գանձվող վճարները չպետք է ավելի բարձր լինեն, քան այդ Պայմանավորվող կողմի՝ համանման միջազգային ծառայություններ իրականացնող և նույնպիսի օդանավերից և նմանատիպ սպասարկումներից, ծառայություններից օգտվող նշանակված ավիաընկերությունից (ավիաընկերություններից) գանձվող վճարներն են:

2. Յուրաքանչյուր օդանավակայանից, ներառյալ դրա տեխնիկական և այլ միջոցներից ու ծառայություններից օգտվելու համար վճարները և այլ գանձումները, ինչպես նաև օդագնացության ծառայությունների, հաղորդակցության միջոցների և ծառայությունների համար վճարումները կատարվում են յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի հաստատած գներին ու սակագներին համապատասխան:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերից մեկի տարածքով ուղղակի տարանցում կատարող այն ուղևորները, ուղեբեռը և բեռները, որոնք դուրս չեն բերվում այդ նպատակով տրամադրված օդանավակայանի սահմաններից, պետք է ենթարկվեն միայն պարզեցված վերահսկողության: Ուղղակի տարանցում կատարելով՝ ուղեբեռը և բեռները ազատվում են մաքսատուրքերից և դրանց համարժեք այլ հարկերից, գանձումներից և վճարներից:

Հոդված 9

1. Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաընկերությունները պետք է արդարացի և հավասար հնարավորություն ունենան իրենց համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով իրականացնելու համաձայնեցված հաղորդակցություններ:

2. Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաընկերությունը (ավիաընկերությունները) համաձայնեցված ծառայություններ իրականացնելիս պետք է հաշվի առնի մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության շահերը, որպեսզի անհիմն կերպով չխոչընդոտի վերջինիս կողմից երթուղիներում կամ դրանց մի մասում ծառայություններ իրականացվելուն:

3. Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաընկերությունների կողմից իրականացվող համաձայնեցված հաղորդակցությունները պետք է առավել չափով կատարեն սահմանված երթուղիներով փոխադրման նկատմամբ հասարակության պահանջները, և յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի բեռնվածության խելամիտ գործակիցների սահմաններում

այնպիսի տարողունակության ապահովումը, որը կհամապատասխանի Պայմանավորվող կողմերի համապատասխան տարածքների միջև ուղևորների, բեռների և փոստի փոխադրման վերաբերյալ գործող և խելամտորեն ակնկալվող պահանջներին:

4. Նշանակված ավիաընկերությունների կողմից սույն Համաձայնագրին համապատասխան կատարվող ծառայությունները պետք է իրականացվեն այն հիմնական սկզբունքների համաձայն, ըստ որոնց տարողունակությունը պետք է համապատասխանի՝

ա) մեկնման և ժամանման երկրների միջև գործող երթևեկության կանոններին.

բ) այն տարածքի երթևեկության կանոններին, որում իրականացվում են համաձայնեցված հաղորդակցությունները.

գ) անվայրէջք բռիչքների կանոններին:

5. Նշանակված ավիաընկերությունների տարողունակության, հաճախականությունների և օդանավերի տեսակների վերաբերյալ հարցերը համաձայնեցվում են Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև:

Հոդված 10

1. Համաձայնեցված ծառայությունների սակագները պետք է սահմանել խելամիտ չափերով՝ հաշվի առնելով բոլոր անհրաժեշտ գործոնները, ներառյալ շահագործման ինքնարժեքը, խելամիտ շահույթը, ավիաընկերությունների բնութագրերը (օրինակ՝ արագության և սպասարկման ստանդարտները) և կոնկրետ սահմանված երթուղում կամ դրա մի մասում այլ ավիաընկերությունների սակագները: Այդ սակագները պետք է սահմանվեն սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված սակագները, ինչպես նաև դրանց հետ կապված կոմիսիոն վճարները պետք է հնարավորության սահմաններում համաձայնեցնել համապատասխան նշանակված ավիաընկերությունների միջև սահմանված երթուղիներից յուրաքանչյուրի համար՝ խորհրդակցելով այդ երթուղիներում կամ դրանց մի մասում

գործող մյուս ավիաընկերությունների հետ: Նման ձևով համաձայնեցված սակագները ենթակա են հաստատման:

3. Եթե նշանակված ավիաընկերությունները չկարողանան համաձայնության գալ այդ սակագներից որևէ մեկի վերաբերյալ, կամ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով հնարավոր չլինի հասնել համաձայնության ցանկացած այլ սակագնի վերաբերյալ, Պայմանավորվող կողմերի իշխանությունները կփորձեն սահմանել այդ սակագինը իրենց միջև կայացվելիք համաձայնությամբ:

4. Եթե ավիացիոն իշխանությունները չկարողանան համաձայնության հասնել սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ իրենց ներկայացված սակագներից որևէ մեկի վերաբերյալ կամ 3-րդ կետով նախատեսված կարգով սահմանել որևէ սակագին, ապա վեճը կլուծվի սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով:

5. Ոչ մի սակագին չի մտնում ուժի մեջ, եթե այն չի հաստատվում Պայմանավորվող կողմերից որևէ մեկի ավիացիոն իշխանությունների կողմից:

6. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված սակագները ուժի մեջ են մնում այնքան ժամանակ, քանի դեռ սույն հոդվածով նախատեսված կարգով չեն սահմանվել նոր սակագներ:

Հոդված 11

1. Պայմանավորվող կողմերից մեկի նշանակված ավիաընկերության կողմից շահագործվող օդանավերը, ինչպես նաև դրանց հիմնական սարքավորումները, վառելիքի պաշարները և յուղման նյութերը, օդանավի պաշարները (ներառյալ սնունդը, խմիչքը և ծխախոտը), որոնք գտնվում են օդանավում, մյուս Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելիս պետք է ազատվեն բոլոր մաքսատուրքերից, գանձումներից և համանման այլ վճարումներից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները մնան ինքնաթիռում մինչև վերաարտահանումը:

2. Նույն մաքսատուրքերից, գանձումներից և վճարումներից ազատվում են նաև հետևյալ սարքավորումները և պաշարները (քացառությամբ այն վճարումների, որոնք կապված են մատուցվող ծառայությունների հետ)։

ա) Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում օդանավ վերցված ինքնաթիռի պաշարները՝ այն քանակության սահմաններում, որը նախատեսված է մյուս Պայմանավորվող կողմի իշխանությունների կողմից՝ այդ Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) շահագործվող օդանավում օգտագործելու համար։

բ) պահեստամասերը և սարքավորումները, որոնք բերվել են Պայմանավորվող կողմերից մեկի տարածք մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից շահագործվող օդանավի տեխնիկական սպասարկման կամ նորոգման համար։

գ) վառելիքը և յուղման նյութերը, որոնք նախատեսված են Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից օգտագործվելու համար, եթե նույնիսկ այդպիսի պաշարները օգտագործվելու են այն Պայմանավորվող կողմի տարածքում կատարվող երթուղու մի մասն անցնելու ընթացքում, որում դրանք բերվել են օդանավ։

3. Կարող է պահանջվել, որ 2-րդ կետում նշված նյութերը պահվեն մաքսային մարմինների հսկողության տակ։

4. Հիմնական ավիասարքավորումները, ինչպես նաև նյութերը, պաշարները և պահեստամասերը, որոնք պահվում են Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաընկերության կողմից շահագործվող օդանավում, կարող են բեռնաթափվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում միայն այդ Պայմանավորվող կողմի մաքսային իշխանությունների քույլտվությամբ։

Այդ դեպքում դրանք կարող են վերցվել նշված իշխանությունների վերահսկողության տակ մինչև վերաարտահանումը կամ մաքսային կանոններին համապատասխան այլ ձևով տնօրինումը։

Հոդված 12

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանը իրավունք է տալիս ազատորեն փոխանցելու եկամուտների և ծախսերի միջև առաջացած այն տարբերությունը, որը ստացվել է նրա տարածքում՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության կողմից ուղևորների, ուղեքեռի, քեռների և փոստի փոխադրման հետ: Այդպիսի փոխանցումը պետք է կատարվի ազատ փոխարկելի արժույթով՝ փոխանցման օրը գործող պաշտոնական փոխանակման փոխարժեքով:

2. Եթե Պայմանավորվող կողմերի միջև վճարումների վերաբերյալ կնքվի հատուկ համաձայնագիր, ապա փոխանցումը կկատարվի այդ համաձայնագրով նախատեսված կարգով:

Հոդված 13

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանը փոխադարձության հիման վրա իրավունք է տալիս իր տարածքում ստեղծել և պահել գրասենյակներ՝ տնտեսական, տեխնիկական, կառավարման և վարչական աշխատակազմով՝ այնքանով, որքանով որ դրանք կարող են անհրաժեշտ լինել տվյալ նշանակված ավիաընկերության գործունեության համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություն իրավունք ունի թողարկել իր միջազգային ծառայությունների հետ կապված փոխադրման փաստաթղթեր, ինչպես նաև գովազդել և զարգացնել տոմսերի վաճառքը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում: Այդպիսի վաճառքը կարող է իրականացվել մյուս Պայմանավորվող կողմի գործող օրենքների և կանոնների համաձայն՝ ուղղակիորեն իրենց սեփական գրասենյակների կամ (և) ճամփորդական (զբոսաշրջային) ֆիրմաների միջոցով՝ ցանկացած անձանց, կազմակերպություններին կամ մարմիններին:

3. Ներկայացուցիչները և անձնակազմը պետք է ենթարկվեն մյուս Պայմանավորվող կողմի երկրի գործող օրենքներին և կանոններին: Այդ օրենքների, կանոնների և սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ փոխադարձության հիման վրա և նվազագույն հապաղմամբ սույն

հողվածի 1-ին կետում հիշատակված ներկայացուցիչներին և աշխատակազմին տալիս է աշխատանքի թույլտվություններ, մուտքի հրավերներ և այլ համանման թույլտվություններ:

Հոդված 14

1. Միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտականությունների համաձայն՝ Պայմանավորվող կողմերը կրկին անգամ հավաստում են, որ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը անօրինական գործողություններից պաշտպանելու համար միմյանց հանդեպ ունեցած իրենց պարտականությունը կազմում է սույն Համաձայնագրի բաղկացուցիչ մասը: Սահմանափակելով միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտականությունների գերակայությունը՝ Պայմանավորվող կողմերը, մասնավորապես, գործելու են 1963 թ. սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավերում կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավերի անօրինական գրավման դեմ պայքարելու մասին» կոնվենցիայի, 1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների կանխարգելման մասին» կոնվենցիայի, 1988թ. փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի նպատակների համար ծառայող օդանավակայաններում անօրինական բռնի գործողությունների կանխարգելման մասին» արձանագրության, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը կարգավորող և Պայմանավորվող կողմերի համար իրավականորեն պարտադիր ցանկացած այլ բազմակողմանի միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան:

2. Պայմանավորվող կողմերը մեկմեկու խնդրանքով միմյանց ցույց կտան անհրաժեշտ օգնություն քաղաքացիական ավիացիայի օդանավերի անօրինական գրավման գործողությունների, օդագնացության միջոցների դեմ ուղղված այլ անօրինական գործողությունների, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգությանը սպառնացող ցանկացած այլ վտանգների կանխման գործում:

3. Պայմանավորվող կողմերը կգործեն Բաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից ընդունված և կոնվենցիայի հավելվածներում նախատեսված՝ ավիացիայի անվտանգության կանոններին և տեխնիկական պահանջներին համապատասխան՝ այնքանով, որքանով այդպիսի անվտանգության կանոնները և պահանջները կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ: Նրանք կպահանջեն, որ իրենց տարածքում գրանցված օդանավեր շահագործողները կամ իրենց տարածքում գործունեության հիմնական վայր կամ մշտական ներկայացուցչություն ունեցող օդանավեր շահագործողները գործեն ավիացիայի անվտանգության այդ կանոններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ մյուս Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելիս, այդ տարածքից մեկնելիս և այդ տարածքում գտնվելիս օդանավերի այդպիսի շահագործողներից կարող է պահանջվել, որ նրանք պահպանեն սույն հոդվածի 3-րդ կետում հիշատակված քաղաքացիական ավիացիայի անվտանգության կանոնները և պահանջները:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ իր տարածքում կձեռնարկվեն օդանավի պաշտպանության, ուղևորների, փոխադրվող առարկաների, ուղեբեռի, բեռների և օդանավի պաշարների ստուգման հետ կապված համապատասխան միջոցներ ինչպես նստեցումից կամ բեռնումից առաջ, այնպես էլ այդ ընթացքում: Որոշակի սպառնալիքի վերացման համար, անվտանգության հատուկ միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ուշադրությամբ կքննարկի մյուս Պայմանավորվող կողմի ցանկացած միջնորդություն:

5. Եթե տեղի են ունենում քաղաքացիական ավիացիայի օդանավերի անօրինական գրավման կամ ադպիսի գրավման սպառնալիքի, ինչպես նաև օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմերի, օդանավակայանների և օդագնացության մյուս միջոցների դեմ ուղղված այլ անօրինական գործողությունների դեպքեր, ապա Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց ցույց տան օժանդակություն հաղորդակցության հեշտացման, ինչպես նաև այդպիսի դեպքերի կամ սպառնալիքի անհապաղ և անվտանգ վերացմանն ուղղված համապատասխան այլ միջոցառումների անցկացման միջոցով:

Հոդված 15

Սույն Համաձայնագրի հետ կապված բոլոր հարցերով փոխհամագործակցությունն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև ժամանակ առ ժամանակ կանցկացվեն խորհրդակցություններ:

Հոդված 16

Սույն Համաձայնագրի կամ դրա հավելվածի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված բոլոր վեճերը երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև կլուծվեն ուղղակի բանակցությունների միջոցով: Եթե նշված ավիացիոն իշխանությունները չհասնեն համաձայնության, ապա վեճը կլուծվի դիվանագիտական ճանապարհներով:

Հոդված 17

Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը ցանկանում է փոփոխել սույն Համաձայնագրի կամ դրա հավելվածի դրույթները, նա կարող է պահանջել երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև անցկացնել խորհրդակցություն առաջարկվող փոփոխությունների հարցով:

Խորհրդակցությունները կսկսվեն պահանջի ներկայացման օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները չհամաձայնվեն այդ ժամկետը երկարաձգելու մասին:

Համաձայնագրի փոփոխությունները ուժի մեջ կմտնեն այն պահից, երբ Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ճանապարհներով հայտագրեր կփոխանակեն իրենց սահմանադրական ընթացակարգերի կատարման մասին: Հավելվածի փոփոխությունները կարող են կատարվել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների համաձայնությամբ:

Հոդված 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ժամանակ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիվանագիտական ճանապարհով մյուս Պայմանավորվող կողմին գրավոր հայտնել սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Համաձայնագրի

գործողությունը կդադարեցվի այդպիսի հայտագրի ստացման օրվանից մեկ (1) տարի հետո, եթե այդ ժամկետը լրանալուց առաջ հայտագիրը չեղյալ չհայտարարվի Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ:

Հոդված 19


Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Պայմանավորվող կողմերի կողմից իրենց ներպետական ընթացակարգերի կատարման մասին միմյանց ծանուցելու օրվանից:

Ի վկայություն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:


Կատարված է Կահիրե քաղաքում, 2001թ. մայիսի 06-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝



Եգիպտոսի Արաբական
Հանրապետության
կառավարության կողմից՝



6.5.2001

Հավելված

«Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի
Արաբական Հանրապետության միջև օդային
հաղորդակցության մասին»
Համաձայնագրի

Սահմանված երթուղիներ՝

ա) որոնք օգտագործվելու են երկու ուղղությամբ
Հայաստանի Հանրապետության նշանակված ավիաընկերության
(ավիաընկերությունների) կողմից.

ՀՀ-ում կետեր

ԵԱՀ-ում կետեր

բ) որոնք օգտագործվելու են Եգիպտոսի Արաբական Հանրա-
պետության նշանակված ավիաընկերության (ավիաընկերու-
թյունների) կողմից.

ԵԱՀ-ում կետեր

ՀՀ-ում կետեր